

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՎ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԱԿՆԵՐԻ, ՆՇԱՆՆԵՐԻ ԵՎ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ
ՉԱՓԱՆԻՇԵՐ**

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանում զբոսաշրջային ուղղությունների կարգավորումներն արդյունավետ կազմակերպելու համար առանձնացվում են զբոսաշրջային այցելավայր ուղղորդող նշանների երկու հիմնական կատեգորիաներ, որոնք կիրառելի են նաև հանրային և առևտրային զբոսաշրջային օբյեկտները նշելու համար: Դրանք են՝

- 1) դեպի զբոսաշրջային վայրերի ճանապարհային ուղղության ցուցիչներ,
- 2) արահետների ցուցանակներ և գծանշումներ:

2. Բոլոր ճանապարհային զբոսաշրջային ցուցանակները լինում են լուսանդրադարձիչ, որոնց վրա գիշերվա ժամերին երևում են նույն գույները, ձևը և գրվածքը, ինչը և ցերեկային ժամերին: Բոլոր մշտական նշանները համապատասխանում են «BS 873 կամ EN 12899-1:2001 ֆիքսված, ուղղահայաց ճանապարհային երթևեկության նշաններ – Մաս 1. Ֆիքսված նշաններ» պահանջներին: Այն նշանները, որոնք չեն գերազանցում 1.2 մ բարձրությունը և 2.4 մ լայնությունը, պատրաստվում են մեկ կտորից: Եթե օգտագործվում են մեկից ավելի կտորներ նշանը հավաքելու համար, ապա կտորների քանակը ողջամտորեն քիչ է լինում, իսկ առանձին կտորները քառանկյուն են՝ համադրելի չափերի ու ձևերի:

**ԳԼՈՒԽ 2. ԶՐՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՑՈՒՑԱՆԱԿՆԵՐԻ, ՆՇԱՆՆԵՐԻ ԵՎ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՉԱՓԱՆԻՇԵՐ**

3. Բոլոր զբոսաշրջային ճանապարհային, տեղեկատվական ցուցանակների և ուղղության ցուցիչների վրա լինում է տեղեկատվություն հետևյալի մասին՝ նշված հերթականությամբ ձախից աջ.

- 1) Ուղղություն ցույց տվող նշան, որի ստորին հատվածում նշված լինի հեռավորությունը կիլոմետրով կամ մետրով (միայն անգլերենով),
- 2) Այցելավայրի անվանումը,
- 3) Թեմատիկ նշան/նշանները,
- 4) Արտադրողի մասին տվյալներ (ցուցանակի հակառակ կողմում, ոչ ավել քան 15մմ տառերի բարձրությամբ):

Բոլոր տեսակի զբոսաշրջային ճանապարհային, տեղեկատվական նշանների վրա արգելվում է որևէ այլ նշանի առկայություն, բացառությամբ առևտրային գործունեության զբոսաշրջային նշանների, որոնց վրա թույլատրելի է նաև ապրանքային նշանի առկայությունը, որի չափը

սահմանվում է սույն հավելվածի 9-12-րդ կետերում: Թեմատիկ նշանների դեպքում օգտագործվում են միայն միջազգայնորեն ընդունված և ճանաչելի զբոսաշրջային նշանները:

Աղյուսակ 1

Ճանապարհային տեղեկատվական թեմատիկ նշաններ

	Մեկնաբանություն		Մեկնաբանություն
			Աստղադիտում
	Թանգարան		Ձիավարություն
	Օդանավակայան		Դահուկավազքի արահետ
	Հեծանվային արահետ		Լեռնադահուկային արահետ
	Հեծանիվների նորոգում		Չմշկավազք
	Մոտոցիկլի ճանապարհ		Սլայդինգ
	Արտաճանապարհային երթևեկություն		Սնորրոդինդ
	Պահակակետ		Չյունագնաց
	Տեսողության սահմանափակում ունեցողներին հասանելիություն		Արջերի դիտում
	Անվասայլակով հասանելիություն		Թռչնադիտարկում
	Խարույկ		Եղնիկների դիտակետ
	վրանատեղի		Բույսերի/ձաղիկների դիտում
	Բացօթյա անվելու վայր		Կիրճի մուտք
	Խմելու ջուր		Դիտակետ
	Բացօթյա անվելու վայրի շվաքարան		Ջրասուզում
	գիշերակացի ծածկ		Ձկնորսություն
	Խաղահրապարակ		Կայակինգ
	Նետաձգություն		Ջրային դահուկ
	Քարանձավախուզում		Հեծանվանավակ
	Մագլցում		Մոտորանավակ
	Ժայռամագլցում		Ռաֆթինգ
	Քայլարշավ		Լողալու թույլատրելի ակի
	Պարագլայդինգ		Լողափ
	Սքեյթբորդինգ		Վինդսուրֆինգ

4. Միջազգային չափանիշերի համաձայն՝ ընդունված են երկլեզու ցուցանակներ: Հայաստանում տեղադրվող ցուցանակները լինում են հայերեն և անգլերեն՝ ցուցանակի վրա

տեղակայման առաջնահերթություն տալով պետական լեզվին: Յուցանակների վրա նշված հատուկ անունները գրվում են համարժեք լատինատառ, իսկ հասարակ անունները՝ անգլերենի դասական թարգմանությամբ: Յուրաքանչյուր լեզվի համար գերակայում են տվյալ լեզվի քերականական մոտեցումները:

Օրինակ՝ Տաթևի վանական համալիր,

Tatev Monastic Complex:

5. Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի N 955-Ն որոշման 1-ին հավելվածի 167-րդ կետի՝ Հայաստանում ճանապարհային նշանները բաժանվում են 8 խմբի.

- 1) նախազգուշացնող,
- 2) առավելության,
- 3) արգելող,
- 4) թելադրող,
- 5) հատուկ թելադրանքի,
- 6) տեղեկատվության,
- 7) սպասարկման,
- 8) լրացուցիչ տեղեկատվության (ցուցանակներ):

6. Զբոսաշրջային նշանակության վայրերը նշելու համար սույն հավելվածի 6-րդ կետով սահմանված ճանապարհային նշանների խմբերից կիրառվում են հիմնականում տեղեկատվության և սպասարկման նշանները, որոնք մշակված են ըստ միջազգային նորմերի: Եթե տվյալ ճանապարհը թեմատիկ ուղղություն է սպասարկում, ապա զբոսաշրջային ճանապարհային ցուցիչների վրա օգտագործվում են պետության կողմից տրամադրվող նշանները, եթե առկա են, կամ նորը ստեղծելու անհրաժեշտություն կա, համաձայնեցվում են Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի հետ: Ստորև ներկայացվում են Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության ոլորտում հաճախ հանդիպող և կարևորվող թեմատիկ ճանապարհները.

- 1) «Առաջին քրիստոնյա երկիր» ուղի,
- 2) Գինու ուղի,
- 3) Գաստրո ուղի,
- 4) Հնագիտական ուղի,
- 5) Մշակութային ուղի,
- 6) Բնության և թռչունների ուղի,
- 7) Մետաքսի ճանապարհ:

7. Բոլոր տեսակի ցուցանակների տեքստը «Արիալ» (Arial) տառատեսակով է, նիշերը՝ «Արիալ» (Arial) թավ տառատեսակով, գրելաձևը՝ գլխատառերով:

8. Բոլոր լուսանդրադարձիչ պատվածքների գույների ստանդարտները սահմանվում են «ԷյԷսԹիԷմ»-ի (ASTM) D4956 ճանապարհային նշանների լուսանդրադարձիչ պատվածքի ստանդարտ մասնագրով: Զբոսաշրջային ճանապարհային և տեղեկատվական նշանների համար օգտագործվող բոլոր գույները համապատասխանում են այս մասնագրին.

- 1) ճանապարհային երթևեկության ուղղության ցուցիչների հիմնագույնը շագանակագույն է

«ՊԱՆՏՈՆ» (PANTONE) 477 C C42, M80 Y92 K63 R92 G48 B33 տառատեսակի գույնը՝ սպիտակ «ՊԱՆՏՈՆ» (PANTONE) 11-0601 TCX R244 G245 B240,

2) արահետների ցուցանակների հիմնագույնը դեղին է՝ «ՊԱՆՏՈՆ» (PANTONE) 123 CVC C0 M23 Y100 K0 R255 G198 B30 տառատեսակի գույնը՝ շագանակագույն «ՊԱՆՏՈՆ» (PANTONE) 477 C C42, M80 Y92 K63 R92 G48 B33,

3) տեղեկատվական նշանների հիմնագույնը շագանակագույն է «ՊԱՆՏՈՆ» (PANTONE) 477 C C42, M80 Y92 K63 R92 G48 B33 տառատեսակի գույնը՝ սպիտակ «ՊԱՆՏՈՆ» (PANTONE) 11-0601 TCX R244 G245 B240:

9. Ցուցանակների տեքստի չափի և տեղակայման չափանիշերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի N 955-Ն որոշմամբ:

10. Չափման հիմնական միավորը sw-ն է, որը հավասար է լատինական “x” տառի բարձրության մեկ քառորդին: Որպես կանոն, “x” տառի բարձրությունը բոլոր ճանապարհային նշանների վրա

Գծապատկեր 1

Ուղղության ցուցիչ, չափեր



PANTONE 11-0601TCX
R244 G245 B240

PANTONE 477 C
C42 M80 Y92 K63
R92 G48 B33

նույնն է լինում: Այդուհանդերձ, կան որոշ ձևաչափեր, որոնց պարագայում “x” տառի բարձրությունը կարող է ընդունված ստանդարտից ավելի մեծ լինել: Այդ դեպքերում sw մեծությունը համամասնորեն ավելի մեծ է ընդունվում, եթե այլ պահանջ չի ներկայացվում: Հավելվածում նշվում են ոչ թե բուն տառի չափերը, այլ ամբողջ նիշատեղի կամ շրջանակի չափերը: Սա տարածվում է ոչ միայն տառերի, այլ նաև տողում կամ սյունակում գրված բոլոր

թվերի ու նիշերի վրա: Ճանապարհային ստանդարտ նշանների մեծ մասի վրա թողնում են 1.5 sw հաստությամբ եզրագիծ: Այն դեպքերում, երբ եզրագծի հաստությունն այլ է լինում, այն հավասարեցվում է շրջանակի կլորացված անկյունի ներքին կորության շառավղին:

11. Սլաքի ձևաչափը ներկայացված է ստորև նկարում: Ներկայացված 16 sw երկարությունը նվազեցվում է մինչև 14 sw-ի, երբ սլաքը պատկերվում է ուղղաձիգ՝ ինչ-որ տառերի կամ նշանների կողքին: Եթե սլաքի կողքին պատկերված նշանը կամ գրված տողը ունի ավելի քան 14 sw բարձրություն կամ ցուցատախտակի բարձրությունը գերազանցում է 14 sw-ն (որովհետև դրա վրա պատկերված է ավելի մեծ նիշ կամ նկար), ապա օգտագործվում է 16 sw երկարությամբ սլաք:

Գծապատկեր 2

Ուղղության նախնական ցուցիչ, չափեր



12. Զբոսաշրջային բոլոր տեղեկատվական նշանները պետք է համապատասխանեն հետևյալ չափանիշերին.

- 1) Նշանի ցուցատախտակի չափերը +/-1.5 մմ-ի ճշտությամբ համապատասխանում են սույն հավելվածով սահմանված պարամետրերին, իսկ ցուցատախտակի ուռուցիկությունը չի գերազանցում 0.005(D) մեծությունը, որտեղ (D)-ն ցուցատախտակի ամենաերկար կողմի երկարությունն է:
- 2) Ճանապարհային նշաններ արտադրող կազմակերպությունը իր արտադրանքի ձևաչափն ու որակը համապատասխանեցնում է գործող ստանդարտներին: Այն դեպքերում, երբ թույլատրելի շեղումներ սահմանված չեն, արտադրանքի ձևաչափն ու որակը համապատասխանում է ընդունված նորմերին:
- 3) Այլումինե թիթեղի հաստությունը 2 մմ է՝ կոշտության կողերի առկայության դեպքում: Նշանների համար նախատեսված «5052-H38» ստանդարտ այլումինե համաձուլվածքը համապատասխանում է ««ԷյԷսԹիԷմ»-ի (ASTM) B209M» նորմի կամ «BS EN 485-2:2008» նորմի պահանջներին: Ցուցատախտակի մակերևույթին փակցնելու համար նախատեսված բարակ այլումինե թիթեղները նույնպես համապատասխանում են վերոհիշյալ մասնագրերին, սակայն դրանց հաստությունը կարող է կազմել 1.6 մմ: Երբ գոյություն ունեցող նշանի վրա փակցվում է նման մակերևութային շերտ, այն պատրաստված է լինում նույն նյութից, ինչ սկզբնական նշանը:

Ստանդարտ չափի (150 մմ բարձրությամբ) փողոցի անվանատախտակները պատրաստված են լինում 6 մմ հաստությամբ հարթ ալյումինե թիթեղից՝ «6061-T6-511» համաձուլվածքից կամ մամլված ալյումինից:

4) Տրաֆարետային տպագրության համար օգտագործվող ներկանյութը նախատեսված է ճանապարհային նշանների համար:

5) Բոլոր ճանապարհային նշանները հստակորեն և մշտապես մակնշվում են (դիմացկուն, եղանակներին դիմակայուն նյութերի օգտագործմամբ) կամ դրանց վրա դրոշմվում է նույնականացման ծածկագիր: Ծածկագիրը լինում է 6-10 մմ բարձրության նիշերով, զետեղվի նշանի ներքևի աջ հետնամասում և մակնշվի այնպես, որ նշանի դիմացի մակերևույթը չվնասվի: Արտադրողը մակնշման մեջ ներառում է հետևյալ տեղեկությունները.

ա) արտադրողի անունը,

բ) արտադրության ամիսը և տարին,

գ) նշանի երեսպատման նյութի և ներկանյութի ապրանքանիշը, եթե կիրառելի է:

6) Ճանապարհային նշաններ պատրաստողի և տեղադրողի կողմից տրամադրվում է որակի պահպանման երաշխիք բոլոր նշանների համար՝ ներառյալ նյութերը և աշխատանքները՝ նախատեսելով փոխարինման պարտավորություն հինգ տարի ժամկետով:

7) Մշտական տեղադրվող ճանապարհային նշանների համար կիրառվող հենասյուները համապատասխանում են BS 873, Մաս 7-ի կամ EN համարժեք ստանդարտին, մակերեսի պաշտպանիչ նյութի համար՝ BS 873, Մաս 6-ի պահանջներին և հետևյալին՝ պողպատե հենասյուները խողովակաձև են լինում կամ ուղղանկյուն կտրվածքի սնամեջ խողովակներ, որոնք համապատասխանում են BS EN 10 210-ին, հանգույցները, ունիվերսալ հեծանները կամ սյուները համապատասխանում են BS 4-1-ին և արտադրվում են S275 J0 կամ S275 J2 կարգի պողպատից: Ալյումինե հենասյուները խողովակաձև են կամ ուղղանկյուն կտրվածքի սնամեջ խողովակներից:

8) Հենասյուները նշանի վերևի մասից ավելի երկար չեն լինում, եթե դրանց վրա չի ամրացվում արտաքին լուսավորության լամպ, ինչի դեպքում վեր բարձրացող հատվածը նվազագույնի է հասցվում: Մեկ հենասյան վրա տեղադրվող նշանները տեղակայվում են այնպես, որ հենասյունը լինի նշանի մեջտեղում, եթե այլ բան չի նախատեսվում:

ԳԼՈՒԽ 3. ԱՐԱՀԵՏՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԱԿՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

13. Արահետների ցուցանակներին և ուղղորդող նշաններին ներկայացվող պահանջների, նախագծման և տեղադրման նորմերի տեխնիկական կարգավորման նպատակն է.

- 1) սահմանել արահետների կահավորման տեսակներն ու չափանիշերը,
- 2) ստեղծել նախադրյալներ՝ ուղղված զբոսաշրջիկների անվտանգությանը, հարմարավետությանը և շրջակա միջավայրի պաշտպանությանը,
- 3) նպաստել Հայաստանի Հանրապետության տարածքում արահետների միանման և միջազգայնորեն ընդունված չափանիշերով կահավորմանը,
- 4) ստեղծել քայլարշավային արահետների պլանավորման և գծանշելու հետ կապված աշխատանքների իրականացման մեթոդաբանական հիմքեր:

14. Արահետների նախագծման ու հարդարման գործընթացը սկսելուց առաջ անհրաժեշտ է ճանապարհային նշաններ պատրաստողի կողմից արահետների նախագծման ու հարդարման գործընթացը սկսելու և ճանապարհային նշաններ պատրաստողի և տեղադրողի կողմից տրամադրվող բոլոր նշանների համար որակի պահպանման երաշխիքի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել տեղական ինքնակառավարման մարմիններ և ոլորտը համակարգող կառույցներ:

15. Տեխնիկական կարգավորումները սահմանում են ենթակառուցվածքի տեսակի, նախագծման, տեղադրման և ենթակառուցվածքների բնութագրիչների տվյալները:

16. Ցուցանակների վրա անհրաժեշտ է տեղադրել տեղեկատվությունը սույն հավելվածով նախատեսված դրոյթներին համապատասխան:

17. Կարգավորվում են հետևյալ ենթակառուցվածքների տեսակները.

1) Հիմնական ցուցանակներ, որոնք են՝





ա) մեկնարկային. մեկնարկային ցուցանակի նպատակն է հնարավորինս մանրամասն տեղեկատվություն հաղորդել արահետի մասին: Այս ցուցանակի գույնը, տառատեսակը, բովանդակությունը համապատասխան են լինում հիմնական ցուցանակների համար ընտրված չափանիշերին:

Մեկնարկային ցուցանակի նախագծման ձևը, չափը կարող է տարբեր լինել, սակայն պարտադիր պարունակում են հետևյալ տեղեկատվությունը (տես՝ աղյուսակ 1).

Աղյուսակ 2

Մեկնարկային ցուցանակի վրայի անհրաժեշտ տեղեկատվություն

Արահետի անվանում (կամ ուղղություններ)	
Trail name	
Արահետի երկարություն Trail distance	8 ԿՄ 8 KM
Միջին տևողություն (գրվում է միջինացված ձևով) Average duration	4 – 5 Ժ 4 – 5 H
Ծովի մակարդակից առավելագույն և նվազագույն բարձրություն maximum and minimum altitude	նվազագույն 300 Մ - առավելագույն 1700 Մ min 300 M - max 1700 M

Վերելքների և վայրէջքների սխեման Elevation gain / elevation loss		
Արտակարգ իրավիճակների ծառայության կոնտակտներ Emergency Services	911, 112	
Արահետի քարտեզ (կամ քարտեզներ) Trail maps		 արահետի QR կոդ ¹ Trail QR code
Արահետի նկարագրություն ² Trail description		
Արահետն անցնելու հնարավոր միջոցներ (քայլարշավ, ձիավարություն, հեծանվավազք, ամենագնացով երթևեկություն) Possible ways of following this route (hiking, horseback riding, cycling (or mountain biking), offroad / jeeping) 		
Հովանավորների լոգոներ (ստորին հատվածում, ոչ ավել քան ցուցանակի մակերեսի 1/10 մասը) Logos of the sponsors / funders (at the bottom, no more than 1/10 of the board surface)		

բ) Ուղղորդող ցուցանակներ. ուղղորդող ցուցանակները նախատեսված են ուղղորդելու, կողմնորոշելու և տեղեկատվություն փոխանցելու համար: Այս ցուցանակներն ամրացվում են մետաղական ձողի վրա:

Եթե արահետը ճյուղավորվում է, և յուրաքանչյուր ուղղությամբ նորից հարդարված արահետ է շարունակվում, ապա հարկավոր է ճյուղավորման հատվածում մեկ ձողի վրա դնել բոլոր ուղղություններն ուղղորդող ցուցանակներ:


Ուղղորդող ցուցանակները լինում են երկու տեսակ՝ մեկ այցելավայր ուղղորդող (տես՝ գծապատկեր 3) և մի քանի այցելավայր ուղղորդող ցուցանակի վերևի հատվածում՝ դեպի մոտ այցելավայրի անվանումն է, իսկ ներքևում՝ վերջնակետի (տես՝ գծապատկեր 4):

¹ Եթե տվյալ արահետն ունի տեղեկատվություն որևէ պաշտոնական էլեկտրոնային հարթակում

² Եթե անհրաժեշտ է համապատասխան նկարագրություն (պարտադիր չէ)

Գծապատկեր 3

Մեկ այցելավայր ուղղորդող ցուցանակի



PANTONE 477 C
C42 M80 Y92 K63
R92 G48 B33



PANTONE 123 CVC
C0 M23 Y100 K0
R255 G198 B30







Գծապատկեր 4

Մի քանի այցելավայր ուղղորդող ցուցանակի չափերը

Աղյուսակ 3

Մեկ այցելավայր ուղղորդող ցուցանակին ներկայացվող պահանջներ

տեղեկատվություն		բացատրություն	
1.	անվանում	կամ	արահետի այցելավայրի
2.	հեռավորություն	ցուցանակից դեպի այցելավայր	
3.	Ժամանակ	հաշվարկը՝ միջին շարժման արագությամբ ցուցանակից դեպի նշված այցելավայր	
4.	Գույն	հիմնագույն	Դեղին «Պանտոն» (PANTONE) 123 CVC C0 M23 Y100 K0 R255 G198 B30
		եզրագիծ	շագանակագույն

			«Պանտոն» (PANTONE) 477 C C42, M80 Y92 K63 R92 G48 B33
		տառեր	շագանակագույն «Պանտոն» (PANTONE) 477 C C42, M80 Y92 K63 R92 G48 B33
		գրելաձև	բոլորը գլխատառ
		տառատեսակ	«Արիալ թավ» (Arial Bold)
		տառի չափ	Տեքստը և թվերը 30սմ
			Իսկ թվերի կողքի «ԿՄ, Ժ, Ր, ԿՄ, Կ, ՄԻՆ» գրել տառերի չափի 3/5-ի չափով
5.	նշան		քայլարշավ
			հեծանվավարություն
			ձիավարություն
			ջիպինգ
6.	Կազմակերպության անվանում կամ լոգո	Արահետի հարդարումն իրականացնող կազմակերպության մասին տեղեկատվություն՝ ցուցանակի հակառակ կողմում (ոչ ավել քան 1սմ հարտությամբ տողով անվանում, կամ 3սմ տրամագծով կամ անկյունագծով լոգո)	
7.	Երբ տվյալ արահետը միջպետական արահետի մաս է կազմում (օրինակ՝ The Transcaucasian Trail) ցուցատախտակին՝ ձողին միանալու հատվածում՝ հիմնական տեղեկատվության մոտ, փակցնել տվյալ արահետի լոգոն:		

Կախված ցուցանակի վրա գրվող տեքստի ծավալից՝ ցուցանակի երկարությունը կարող է փոփոխական լինել (550 – 700մմ):

Ուղղորդող ցուցանակի ձողին ներկայացվող պահանջներ

Բնութագրիչ	Չափման միավոր		Արտաքին տեսքը
Նյութ	պողպատ		
Երկարություն	300 սմ	գրունտի մեջ, որից ստորին 10սմ խիճ 40 սմ բետոն	
	250 սմ	բացարձակ բարձրություն	
տրամագիծ	51 – 57 մմ		
ձողի թիթեղի հաստություն	2.5 – 3 մմ		
Գույն	լուսանդրադարձիչ մոխրագույն «Պանտոն» (PANTONE) 14-4107 TCX R185 G186 B189		
կաչուն ջրակայուն թուղթ - պիտակ (sticker)	Եթե արահետը գտնվում կամ անցնում է ԲՀՊՏ-ով, ապա այդ հարվածի ցուցանակի(ների) ձողի վրա՝ ուղղորդող ցուցանակից 3սմ ներքև, հարկավոր է տվյալ ԲՀՊՏ-ի լոգոյով պիտակ (sticker) փակցնել		
բնության հատուկ պահպանվող տարածքներում (ԲՀՊՏ)	Չափ	ոչ ավել քան 50 մմ տրամագծով կամ անկյունագծով	
	Տեղադրություն	անմիջապես ուղղորդող ցուցանակի ներքևի հատվածում	
<ul style="list-style-type: none"> Ձողի վերևի հատվածը փակվում է մետաղական կամ պլաստիկ կափարիչով, խողովակի ներսում ջրի կուտակումներից խուսափելու համար 			

*Ձողի՝ գրունտի մեջ գտնվող հատվածի խորությունը տվյալ տեղանքի սառեցման աստիճանին համապատասխան է լինում:

Ուղղորդող ցուցանակները ձողին ամրացվում են երկու ամրակով (M8 չափի պտուտակներ են) (տես՝ նկար 1): Ցուցատախտակը ձողին միանում է խամուտներով (D 15-16 մմ), իսկ ձողի ու խամուտի մեջտեղում մալուխ է դրվում: Խամուտը ձողին ամրացվում է M8 չափի պտուտակներով: Այս էլեմենտները պատրաստված են լինում չժանգոտվող (ցինկապատ, նիկելապատ և այլն) և ամուր նյութերից:

Եթե մեկ ձողի վրա մի քանի ուղղորդող ցուցանակ կա, ապա դրանք իրարից 5մմ հեռավորության վրա են տեղադրվում:

Նկար 1
Ձողի ամրակ, ձողի չափեր




Ուղղություն ցույց տվող ձող

Ձողով ուղղորդող ցուցանակը կիրառել այն դեպքում, երբ կարիք կա փաստելու, որ ճանապարհը շարունակվում է տվյալ ուղղությամբ:

Առանց ոլորաններով արահետի վրա ուղղություն ցույց տվող ձողերը դրվում են իրարից ամենաշատը 300 մետր հեռավորության վրա:

Շրջադարձի ժամանակ այս ձողերը տեսանելի-հասկանալի տեղադիրքով են դրվում:



Նկար 2
Ուղղություն ցույց տվող ձողի չափեր

Բնութագրիչ	Չափման միավոր		Արտաքին տեսք
Երկարություն	150 սմ	30 սմ*	գրունտի մեջ, որից ստորին 10սմ՝ խիճ 20 սմ՝ բետոն
		120 սմ	բացարձակ բարձրություն
ձողի տրամագիծ	51 – 57 մմ		
ձողի թիթեղի հաստություն	2.5 – 3 մմ		
ձղի ույն	լուսանկարադարձիչ մոխրագույն «Պանտոն» (PANTONE) 14-4107 TCX R185 G186 B189		
<ul style="list-style-type: none"> Ձողի վերևի հատվածը փակվում է մետաղական կամ պլաստիկ կափարիչով՝ խողովակի ներսում ջրի կուտակումներից խուսափելու համար Ձողի վերին հատվածում ներկով գծանշման գծերի հաստությունն ու գույները՝ ըստ գծապատկեր 2.2-Գ.1—ի 			

*Ձողի՝ գրունտի մեջ գտնվող հատվածի խորությունը, տվյալ տեղանքի սառեցման աստիճանին համապատասխան են լինում:

գ) Տեղեկատվական ցուցանակներ. տեղեկատվական ցուցանակների նպատակն է արահետի շրջակայքի՝ տվյալ տեղանքին բնորոշ ֆլորայի, ֆաունայի, անկենդան բնության կամ անհրաժեշտ այլ տեղեկատվության, կամ սրանցից մի քանիսի մասին միաժամանակ տեղեկատվություն փոխանցելը: Այս տեսակի ցուցանակները կարող են տեղադրվել արահետի ամբողջ երկայնքով ցանկացած տեղ:


	տեղեկատվություն	Բացատրություն	
1.	հիշարժան տարրի անվանում	ֆլորա, ֆաունա և այլն	
4.	Գույն	Հիմնագույն	դեղին «Պանտոն» (PANTONE) 123 CVC C0 M23 Y100 K0 R255 G198 B30
		եզրագիծ	շագանակագույն «Պանտոն» (PANTONE) 477 C C42, M80 Y92 K63 R92 G48 B33
		տառեր	շագանակագույն «Պանտոն» (PANTONE) 477 C C42, M80 Y92 K63 R92 G48 B33

		գրելաձև	պարտադիր չէ տեքստը գլխատառերով գրել
		տառատեսակ	«Արիալ Թավ» (Arial Bold)
		տառերի նվազագույն չափ	5 սմ
5.	Նկար, քարտեզ (եթե անհրաժեշտ է)		
6.	հովանավորի տեսանելիություն	Հովանավորող կազմակերպության լոգոն կամ անվանումը կարող են զբաղեցնել ոչ ավել քան ցուցանակի մակերեսի մեկ վեցերորդ մասը (տպագրությունը՝ տեքստի հետ միաժամանակ կամ ցուցանակի վրա կպչուն ջրակայուն թուղթ)	
7.	ձողի(երի) գույնը	լուսանդրադարձիչ մոխրագույն «Պանտոն» (PANTONE) 14-4107 TCX R185 G186 B189	

2) Ներկով գծանշում. ներկով գծանշման նպատակն ուղղություն ցույց տալն է: Այս ուղղորդիչ նշանը հարկավոր է դնել խիստ անհրաժեշտության պարագայում: Այս տեսակի ուղղորդող նշանը բաղկացած է երեք հորիզոնական գծից (սպիտակ, կարմիր, սպիտակ – յուրաքանչյուրի հաստությունը՝ 30մմ, երկարությունը՝ 150մմ) և կարմիր գույնը շարունակող ուղղորդող եռանկյունուց, գծերը միմյանցից հետու են 5մմ-ով:

Գույն	Բնութագրիչ
Սպիտակ	«Պանտոն» (PANTONE) 11-0601 TCX R244 G245 B240
Կարմիր	«Պանտոն» (PANTONE) 18-1664 TCX R208 G28 B31

Նկար 3




Գծապարկեր 5

Ներկով գծանշման ուղղորդիչ նշանի չափերը



Նկար 4

Նկար 5



Նկար 6



Ներկով գծանշման տեխնիկական կարգավորումներն են.

ա) առանց ոլորանների արահետի վրա դրանք դրվում են իրարից ամենաշատը 400 մետր հեռավորության վրա.

բ) ներկով գծանշման նշանները դրվում են միաժամանակ՝ երկու հակառակ ուղղություններով, և յուրաքանչյուր նշան ցույց է տալիս միայն մեկ ուղղություն (տես նկար 5).

գ) ներկով գծանշումը լինում է շարժման ընթացքի ուղղությամբ հնարավոր ամենալավ տեսանելի վայրում.

դ) նշանը կարող է դրվել ծառի, ժայռի, անշարժ մեծ քարի և տեղանքում առկա այլ անշարժ հարմար մակերեսի վրա.

ե) մեկ հենակետի վրա չի կարելի երկու գծանշում կատարել (տես՝ նկար 3 և նկար 4), չի կարելի նաև երկու ուղղությունը սպասարկող մեկ գծանշում ունենալ (տես՝ նկար 5): Հարկավոր է ճանապարհի երկու կողմում տեսանելի նշաններ դնել (տես՝ նկար 6):

զ) Շրջադարձի ժամանակ ներկով գծանշումները տեսանելի-հասկանալի տեղադիրքով է դրվում, իսկ մինչև շրջադարձ կամ ոլորան հասնելը՝ ունենում մեկ ուղղորդող նշան:


է) Եթե արահետի կից տեղանքում չկան համապատասխան վայրեր ներկով գծանշման համար, ապա տեղադրվում է ձողով ուղղորդող ցուցանակ (տես՝ Աղյուսակ 4): Առանց ոլորանների արահետի վրա դրանք դրվում են իրարից ամենաշատը 300 մետր հեռավորության վրա:

ը) Ձողով ուղղորդող ցուցանակը կիրառել միայն այն դեպքում, երբ ներկով գծանշելու այլընտրանք չկա:

- 3) «ՋիՓիէս» (GPS) կոորդինատներով ցուցանակ. «ՋիՓիէս» (GPS) կոորդինատներով ցուցատախտակը տեղադրվում է ուղղորդող ցուցանակի ձողի վրա որպես առանձին բաղադրիչ՝ մատնանշելով ծովի մակարդակից տվյալ վայրի բարձրությունը և գլոբալ տեղայնացման համակարգի կոորդինատները: Այն տեղադրվում է ուղղորդող ցուցատախտակից 3սմ ներքև:

Գծապատկեր 6

«ՋիՓիէս» (GPS) կոորդինատներով ցուցանակի չափերը



«ՋիՓիԷս» (GPS) կոորդինատներով ցուցանակին ներկայացվող պահանջներ

բնութագրիչ		բացատրություն	
1.	չափ	լայնություն	100 մմ
		երկարություն	200 մմ
2.	գույն	հիմնագույն	դեղին «Պանտոն» (PANTONE) 123 CVC C0 M23 Y100 K0 R255 G198 B30
		եզրագիծ	շագանակագույն «Պանտոն» (PANTONE) 477 C C42, M80 Y92 K63 R92 G48 B33
		տառեր, թվեր	շագանակագույն «Պանտոն» (PANTONE) 477 C C42, M80 Y92 K63 R92 G48 B33
		տառատեսակ	«Արիալ Թավ» (Arial Bold)
		տառի չափ	5 սմ
3.	տեղադրություն	նուղղորդող ցուցանակից 3 սմ ներքև	
4.	Ցուցանակի մակերեսը տնտեսելու և հնարավորինս ճշգրիտ կոորդինատներ տեղադրելու համար ստորակետից հետո գրել 5 նիշ:		

18. Հիմնական և «ՋիՓիԷս» (GPS) կոորդինատներով ցուցանակները ալիկաբոնդից են լինում (այլուստից թերթեր պոլիմերային միջնաշերտով):

ԳԼՈՒԽ 4. ԶՐՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄԸ, ՎԱՅՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԵՏԱԳԱ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

19. Զբոսաշրջային ճանապարհային և տեղեկատվական ցուցանակների տեղադրման վայրի ընտրությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության համաձայնությամբ, իսկ հետագա սպասարկումը՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության: